

Նարինե ՍԱՆՈՒԿՅԱՆ  
Երևանի պետական համալսարան

**ՆԵՐԱԿԱՅՈՒՅԹԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ  
ԱՌԱՋՎԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Ներակայույթը (implicature) ներիմաստի տեսակ է, որն առաջարկվել է Հ.Պ. Գրայսի կողմից: Նա ներակայույթը սահմանել է որպես իմաստի այնպիսի արտահայտում, երբ ասելով մի բան, իրականում մեկ այլ բան է առաջարկվում: Ներակայույթը վերագրվում է խոսակիցների այն եզրահանգումներին, որոնք արվում են՝ հիմնվելով ոչ թե բովանդակության բառացի մեկնաբանման վրա, այլ այն դեպքերի, երբ բովանդակությունը լրացնիչ իմաստ է ձեռք բերում կոնկրետ հանգամանքներում: Հետևաբար, «Եթե արտաքերված բառն ունի դիտավորություն և հաղորդում է իր նշանակությունից դուրս հավելյալ իմաստ, կոչվում է ներակայույթ» /Yule, 1996: 35/:

Դ.Սպերբերը և Դ.Վիլսոնը օգտագործեցին մեկ այլ եզրույթ՝ արտակայույթ (explicature), որը վերագրվում էր այն տեղեկատվությանը, «որը հաղորդվում էր»: Արտակայույթը սահմանվում է որպես արտակա կառույցներում տեսանելի և ընկալելի տեղեկատվություն, որը ներակայույթից տարբերվում է կոդավորված իմաստային ներկայացմանը (encoded semantic representation) կամ տրամաբանական ձևով (logical form) /Sperber & Wilson, 1986: 182-183/: Այս սահմանումը որոշակի տարակարծություն է առաջացնում, քանի որ ներակայույթները նույնպես ունենում են տրամաբանական ձևեր, թեև դրանք հաճախ ընկալելի են դառնում երկխոսության զարգացման ընթացքում /Levinson, 1983: 122-123/: Ներակայույթի տրամաբանական ձևեր են համարվում այնպիսի կառույցները, որոնք հիմք են հանդիսանում ասված խոսքից արված կամ հաջորդիվ արվելիք ենթադրությունների համար:

- A. .... What's wrong with your car?
- B. Well, I was driving along and... you know that little red light on the lefthand side of the dash?
- A. What, the oil pressure light?
- B. Yes, and so I thought. “*I'll be late for the dentist if I stop and see to it now and anyway, the car does seem to be running all right, so...*”

A. Wait. *Are you saying the light lit up? And then you went on driving?*

B. Well, nothing sounded any different..., so I figured... (Tyler, 22).

Տվյալ օրինակում խոսակիցը պարզապես հայտնում է, որ եթե կանգներ մեքենան զննելու համար, ապա կուշանար ատամնաբույժի այցից: Այս նկատառումը հիմք է համդիսանում, որպեսզի խոսողը տրամարանորեն հասկանա, որ խոսակիցը շարունակել է մեքենան վարել անգամ անսարքություն նկատելու դեպքում:

Հ.Գրայսը գտնում է, որ արտակայութքը բաղկացած է միայն նախադասության բառացի իմաստից, մինչդեռ ներակայութքը ներառում է նաև կանխամտածված իմաստ: Ω.Չարսթընը ներակայութք (implicature) ու արտակայութքը (explicature) նույնացնում է ներակա (implicit) և արտակա (explicit) իմաստների հետ, դրանք համարելով վերջիններին ոչ շատ գործածվող անվանումներից /Carston, 2008/:

Տվյալ աշխատության նպատակն է երկխոսության շրջանակներում դիտարկել ներակայութքի դրսորման առանձնահատկությունները՝ պայմանավորված ներակայութքի արտահայտման բնույթով:

Կարենոր է նշել, որ Հ.Պ. Գրայսը ներակայութքի՝ որպես ներիմաստի առանձին տեսակի և սահմանումը, և՛, ինչպես կտեսնեմք, նաև խմբավորումը կատարում է իր առաջարկած *համատեղման սկզբունքի* (cooperative principle) և *չորս մաքսիմների* (maxims) հիման վրա: Համատեղման սկզբունքը ներկայացնում է, թե ինչպես են մարդիկ հաղորդակցվում միմյանց հետ և ինչպես են իրենց պահում երկխոսության ժամանակ: Դրա հիմնական խնդիրն է լեզվոգոտագործումը դարձնել առավելագույնս արդյունավետ: Այս սկզբունքը բաժանվում է մաքսիմների, որոնք հնարավոր են դարձնում արդյունավետ հաղորդակցումը և համարվում են արտահայտությունների և դրանցից ընկալվող իմաստների միջև կապը բացատրելու միջոց: Այսինքն, մաքսիմները ոչ միայն առաջացնում են ներակայությներ, այլ տախի են հնարավոր ներակայությների բացատրությունները:

Հ.Պ. Գրայսը տարբերակում է չորս մաքսիմներ՝


1. Որակի մաքսիմ (maxim of quality)
2. Քանակի մաքսիմ (maxim of quantity)
3. Հարաբերականության մաքսիմ (maxim of relation)
4. Ջևի մաքսիմ (maxim of manner)

Որակի մաքսիմի նախապայմաններն են չասել այն, ինչ գիտեք,

որ ճիշտ չի և չասել այն, ինչի համար բավական հիմնավորում չունեք: *Քանակի մաքսիմը* պահանջում է խոսքում ներառել այնքան տեղեկատվություն, որքան պահանջվում է և չծանրաբեռնել խոսք ավելորդ տեղեկատվությամբ: *Հարաբերականության մաքսիմը* վերագրվում է խոսակցության թեմաների փոփոխության անցումներին, հարցերին, որոնց նպատակը կարող է տարբեր լինել և պատասխաններին, որոնք իմաստավորվում են միայն համապատասխան հարցի շրջանակներում: *Ձևի մաքսիմը* կարգավորում է խոսքի մատչելիության և պարզության հարցերը՝ սահմանելով որոշ չափորոշիչներ՝ խուսափել անորոշություններ՝ և երկիմաստություններից, լինել հակիրճ, կապակցված և կազմակերպված: Մաքսիմների կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց շնորհիվ ուշադրության են արժանանում թաքնված իմաստները՝ ներիմաստները, նամանավանդ ներակայութները:

Հ.Պ. Գրայսը, ըստ ներիմաստ տեղեկատվության բնույթի՝ տարբերակում է ներակայութի երկու հիմնական տեսակներ՝ **պայմանական ներակայություն** (conventional implicature) և **խոսակցական ներակայություն** (conversational implicature), վերջինս իր հերթին բաժանելով երկու խմբերի՝ *ընդհանրացված խոսակցական ներակայություն* (generalized conversational implicature) և *մասնավորեցված խոսակցական ներակայություն* (particularized conversational implicature): U.Փ. Լևինսոնը /Levinson, 2000: 13/ հետևյալ սխեմայով է արտահայտում այս տարբերակումը՝

SPEAKER MEANING (total signification of an utterance)



Հ.Պ. Գրայսը նշում է, որ ներակայութներն առաջանում են խոսակցության հաղորդակցական և գործարանական նոտեցման շրջանակներում: Ուստի, այն, ինչ ներակայում է, և այն, ինչ ասվում է՝ խոսողի իմաստի (speakers meaning) մասն են կազմում: Այսինքն,

ներակայույթի դեպքում խոսողի իմաստը ներառում է և՝ արտակայվող, և՝ ներակայվող այն տեղեկատվությունը, որն իրականում նկատի ունի խոսողը, քանի որ արտաքերված խոսքը գործնականում այլ մեկնաբանություն կարող է ստանալ:

**Պայմանական ներակայույթը** նախադասության լեզվական իմաստի մասն է կազմում։ Այն ավելի շատ բառային միավորների կամ արտահայտության համաձայնեցված իմաստի բաղադրիչն է, քան լեզվօգտագործման սկզբունքների հետևանքը։ Կարելի է ասել, որ պայմանական ներակայույթի դեպքում նախադասության իմաստը պայմանավորված է իրավիճակով, որը ցույց է տալիս խոսողի «լեզվօգտագործման նախասիրությունները»։ Այսինքն, պայմանական ներակայույթի դեպքում խոսքում առկա բառային միավորներն իրականում։

1. Իմաստային առումով արտահայտում են որոշակի հակադրություն կամ անհամատեղելիություն, որը, սակայն, խոսողը մեկտեղում է նախադասության մեջ։

- A. He is married but single.
- B. Don't they live together?
- A. They do.
- B. So, what's the matter. Are they going to get divorced?
- A. They never understand each other, never been happy living together (Austen, 86).

Սոհասարակ, ամուսնացած և միայնակ՝ married and single բառերը համարվում են հականիշներ և միևնույն ասույթում դրանց համատեղումը թվում է անհնար։ Եթե նմանօրինակ ասույթներում բառերը գործածվեն իրենց ուղիղ բառարանային իմաստներով և բացակայեն ներակայված իմաստները, խոսքը սխալ և անիմաստ կրվա։ Թեև երկխոսությունը հնարավորություն է տալիս ճշտել ընկալված իմաստները, այնուամենայնիվ, ինչպես երևում է խոսքային գործընթացի զարգացումից, ներակայված հնարավոր ենթադրելի տարրերակներից միայն մեկն է այն ներակայույթը, որը խոսքն արտաքերելիս նկատի ուներ խոսողը։

2. Իմաստային առումով արտահայտում են համատեղելիություն, սակայն որևէ լեզվական միավորի միջոցով (մեծամասամբ շաղկապնդակայիշ) հակադրություն են՝ այնուամենայնիվ ունենալով դրդապատճառ (motivation) /Meibauer, 2010: 407/։

A. Haven't enjoyed so much in years. The meat's a little *greasy but just delicious*. Can you get any more?

B. Perhaps (Clavell, 326).

Վերոնշյալ օրինակում համատեղ գործածված են երկու այն պիսի լեզվական միավորներ, որոնք, կարծես թե, համատեղի են և չեն հակասում միմյանց: Սովորաբար ընդունված կարծիք է, որ յուղոս միսն ավելի համեղ է համարվում, սակայն խոսողը փորձել է հակադրել «յուղոտ»՝ *greasy* և «համեղ»՝ *delicious* բառերը «քայց»՝ բայ լեզվական միավորի միջոցով: Համատեղի միավորների հակադրության պատճառ կարող է հանդիսանալ խոսքն արտաքերողի սուբյեկտիվ կարծիքն ու վերաբերմունքը:

*Խոսակցական* (conversational) ներակայույթը վերագրվում է այն դեպքերին, երբ հաղորդվում է բառացի շաված տեղեկատվություն, որը համատեքստից դուրս այլ նշանակություն կունենար: Խոսակցական ներակայույթի հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն, ի տարբերություն կանխենթադրույթի և կանխավարկածի, պայմանավորված չէ առանձին բառերի և արտահայտությունների իմաստներով, այլ, որպես ամբողջական կառույց, ընկալելի է դառնում կոնկրետ համատեքստում: Այսինքն, մի դրույթում ամփոփված իմաստը նախապայման է հանդիսանում մյուսի իմաստավորման համար: Ուստի, ոչ մի ներակայույթ չի կարող համարվել խոսակցական, եթե համատեքստի շրջանակներում չի տրվում նրա առկայության բացատրությունը /Grice, 1989: 271/:

Ի տարբերություն պայմանական ներակայույթի՝ խոսակցական ներակայույթի արտահայտումը պայմանավորված է Հ.Պ. Գրայսի առաջարկած համատեղման սկզբունքով (cooperative principle) և մաքսիմներով (maxims): Անգամ մաքսիմներից մեկի առկայության փաստն արդեն իսկ խոսում է ներակայույթի մասին: Այսինքն, եթե խոսողը խոսքն արտաքերելիս կիրառում է ձևի, չափի, քանակի և հարաբերության մաքսիմների պահանջները, «ավելորդ» տեղեկատվությունն ամփոփվում է տողատակում:

Ինչպես արդեն նշվել է, Հ.Պ. Գրայսը խոսակցական ներակայույթի շրջանակներում տարբերակում է ընդհանրացված խոսակցական ներակայույթ (generalized conversational implicature) և մասնավորեցված խոսակցական ներակայույթ (particularized conversational implicature) հասկացությունները: *Մասնավորեցված ներա-*

**կայույթները** առանձին համատեքստերի կոնկրետ իրավիճակներում արված արտահայտություններ են, հետևաբար, դրանք ընկալելի են միայն համատեքստում։ Այսինքն, համատեքստից դուրս տվյալ ասույթը բոլորովին այլ մեկնաբանություն կունենա։

A. What had happened three days ago?

B. ***Don't let anyone else touch that coffee.*** Do you understand? ...

Fekesh has drugged Security's coffee... (Niven & Barnes, 326)

Տվյալ օրինակում հարցին տրվող պատասխանը խոսակցի համար միանգամայն հասկանալի է, քանի որ երկխոսության մասնակիցներն ունեն որոշակի ընդհանուր գիտելիքներ, որոնց վրա հիմնվելով թեև խոսսափում են ավելորդ մանրամասներից, սակայն հասկանում են համատեքստի շրջանակներում արտահայտվող ինաստները։ Եթե տրվող պատասխանը դիտարկենք երկխոսությունից դուրս, այն տարբեր մեկնաբանություններ կունենա (1. That coffee belongs to the speaker B 2. It belongs to another person 3. The speaker B doesn't want anyone to drink it 4. No one has the right to touch the speaker B's/others' things 5. Even the speaker A has no right to touch the speaker B's/others' coffee, etc.):

**Հնդիանրացված ներակայույթները** մնում են հաստատուն բոլոր համատեքստերում։ Դրանք համընդիմանուր լեզվական միավորներ են, որոնք պահպանում են իրենց իմաստը անգամ համատեքստի փոփոխության դեպքում։ Այս դեպքում ասույթը արտահայտում է ընդհանրացված ներակայույթի իմաստը, անկախ համատեքստային լուծումներից /Levinson, 2000: 16/։

A. It is a pity that times are not like those in former years when **a man** could have a wireless and hear news or read a newspaper.

B. True. It is a pity (Clavell, 169).

Անգլերեն լեզվում ամրագրված կանոններից է, որ առաջ արտահայտությունները գործածվում են նաև այն դեպքերում, եթե նկատի ունենք ոչ թե կոնկրետ անձի, այլ առհասարակ «մարդ» հասկացությունը, եթե անգամ չի կարևորվում գենդերային պատկանելությունը։ Ուստի տվյալ ասույթի ցանկացած կիրառություն, անկախ հաղորդվող տեղեկատվությունից և համատեքստից, ենթադրում է միևնույն իմաստը։

Ընդհանրացված ներակայույթները, պայմանական ներակայույթների նման, ընկալվում են ինքնարերաբար։ Եթե առաջինի դեպ-

քում գործ ունենք լեզվական և հենքային այնպիսի գիտելիքների հետ, որոնք ծանոթ են տվյալ լեզվին տեղյակ յուրաքանչյուրին, վերջինիս դեպքում առնչվում ենք այն ընդհանուր տեղեկատվությանը, որը հայտնի է երկխոսության մասնակիցներին (գրավոր տարբերակում նաև ընթերցողներին):

Հաճախ ընդհանրացված ներակայութերը շփոթելի են համարվում կամ նույնացվում նաև կանխավարկածների հետ: Դրանց հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ կանխավարկածները ընկալվում են բառի ուղղակի իմաստից հասկացվող հատկությունների շնորհիվ, իսկ ընդհանրացված ներակայութերը լեզվում ամրագրված այնպիսի դրույթներ են, որոնք ունեն կոնկրետ նշանակություն և չունեն փոխարերական իմաստով կիրառվելու հատկություն: Բացի այդ, դրանց ընկալումը պայմանավորված չէ համատեքստի առկայությամբ, քանի որ յուրաքանչյուր կիրառման ժամանակ նրանք նույն իմաստն են արտահայտում:

Առհասարակ, Հ.Պ. Գրայի ներկայացրած խոսակցական ներակայութերը վառ օրինակ են, թե ինչպես են արտալեզվական գործոններն ազդում խոսողի կողմից ներակայութերի արտահայտման և, համապատասխանաբար, խոսակցի կողմից նախադասության իմաստի ընկալման վրա: Ներակայութերը ներիմաստի այն տեսակներն են, որոնց ընկալումը, ի տարբերություն ներիմաստի մյուս տեսակների՝ կանխենքաղըրույթների և կանխավարկածների, բառացիորեն չեն հիմնվում լեզվական կանոնների և ամրագրված իմաստների վրա: Դրանց արտարերումն ի սկզբանե որոշակի դիտավորություն է արտահայտում: Այսինքն, խոսողը խոսքն արտարերում է, գիտակցելով, որ իր շարադրած նախադասությունը բառացիորեն մեկնաբանելու դեպքում չի արտահայտի իրականում նկատառված իմաստը:

Այսպիսով, կարելի է ասել, որ ներակայութը ներիմաստի այն տեսակն է, որը կարելի է բնորոշել հիմնականում երկխոսությանը: Դրա արտահայտումն ու ընկալումը պահանջում է խոսակիցների առկայություն, որոնք ունեն ինչպես համընդհանուր և հենքային գիտելիքներ, այնպես էլ լեզվական շափանիշների ընտրության մասին իրենց սեփական պատկերացումները, և ի վերջո, ընդհանուր համատեքստ, որտեղ տարբերակում են խոսողի իմաստն ու ասույթի իմաստը: Առանց խոսակիցների, ներակայութը չի կարող բռվան-

դակել այլնտրանքային իմաստներ, փոխարենն արտահայտելով այն միակ իմաստը, որը բառերի ուղղակի իմաստներով է պայմանավորված:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Carston R. Thoughts and utterances: the pragmatics of explicit communication. London: John Willay & Sons, 2008.
2. Grice P.H. Studies in the way of words. USA: Harvard University Press, 1989.
3. Levinson S.C. Pragmatics. Cambridge: Cambridge University Press, 1983.
4. Levinson S.C. Presumptive meanings: the theory of generalized conversational implicature. Massachusetts: MIT Press, 2000.
5. Meibauer J. Implicature. // CES-Concise Encyclopedia of Semantics. // Elsevier: Universitat Mainz, 2010.
6. Sperber D., Wilson D. Relevance: communication and cognition. USA: Harvard University Press, 1986.
7. Yule G. Pragmatics. London: Oxford University Press, 1996.
8. Austen J. Persuasion. New York: The New American Library of World Literature, 1980.
9. Clavell J. King Rat. New York: Dell Publishing Co., 1962.
10. Niven L., Barnes S. The Barsoom Project. New York: Berkley Publishing group, 1989.
11. Tyler A. The Accidental Tourist. New York: Berkley books, 1978.

**Н. МАНУКЯН – Проявление импликатуры в диалоге.** – Целью данной статьи является изучение импликатуры в английском диалоге. Импликатура рассматривается как один из видов имплицитности, которая имеет разные способы выражения. В статье также исследованы причины выражения импликатуры в диалоге.

**N. MANUKYAN – The Expression of Implicature in Dialogue.** – The aim of the present paper is to study implicature as one of those types of implicit meaning which are mostly expressed in dialogic speech. Special attention is paid to different types of implicature suggested by H.P. Grice, the essence of which has direct connection to the identification and interpretation of implicitness. The causes for the expression of implicatures in dialogue are also considered.